ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

քաղաք Երևան «03» մայիսի, 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 22-Ա

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով 2017 թվականի մայիսի 02-ի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության N467-Ա/2 հրամանը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության հայտերի ընտրության մրցույթը (այսուհետ՝ մրցույթ) պատշաճ կազմակերպելու նպատակով՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ՝ Գոհար Մելիքսեթյան)՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական մամուլ) և մրցույթի հրավերի փաթեթի տեղադրումը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում.

2) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սահմանված կարգով տրամադրումը.

3) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտական տեղեկատվության և վերլուծության բաժնին (պետ՝ Աիդա Խաչատրյան)՝

ա. մրցույթի հայտ ներկայացնող գիտաշխատողների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,

բ. իրականացնել մրցույթի հայտերի տեխնիկական ստուգումը (մրցույթի հայտերի ներկայացման ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրերի ընթացքում),

գ. մրցույթի արդյունքների ամփոփումից հետո մրցույթի մասնակիցներին 5 (հինգ) աշխատանքային օրերի ընթացքում տրամադրել տեղեկատվություն՝ մրցույթի արդյունքների վերաբերյալ,

դ. կազմակերպել մրցույթի արդյունքներով ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ղեկավարների հետ ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքումը (մինչև 2017 թվականի հունիսի 30-ը):

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ